«Մխիթար Սեբաստացի» կրթահամալիր, 2017թ.

Հայոց գրականության բանավոր քննությունը 9-րդ դասարանում

Քննությունը հիմնվում է տարվա ընթացքում սովորողի կատարած աշխատանքի և ձեռք բերած կարողությունների վրա: Հարցատոմսը երկու հարց ունի.

- Սովորողը անձնական բլոգում ցույց է տալիս տարվա ընթացքում իր կատարած աշխատանքը, ընտրում է դրանցից իր կարծիքով ամենահաջողվածը և ներկայացնում այդ աշխատանքը՝ ինչպես կատարեց, ինչ տվեց իրեն, իր վերաբերմունքը գեղարվեստական այդ գործին՝ այն ժամանակ և հիմա, պատասխանում է հարցերի:
- Նոր առաջադրանք, որի կատարումը կպահանջի մոտ 10 րոպե:

Սովորողը գալիս է քննության սեփական համակարգչով, որը օգտագործում է պատրաստվելիս և ներկայացնելիս: Քննասենյակում կա պրոյեկտոր: Սովորողը պատրաստվելու ժամանակ ունի 20-30 րոպե: Պատրաստ լինելու դեպքում կարող է ավելի շուտ պատասխանել:

Գնահատականը նշանակում է դասավանդող ուսուցիչը:

Հանրակրթության պետական չափորոշիչի ընդհանրական պահանջներից 9-րդ դասարանն ավարտողին.

1) լիարժեք հաղորդակցվի հայերենով՝

ա. կառուցի գրագետ և գեղեցիկ գրավոր և բանավոր խոսք,

բ. ըստ էության ընկալի ուրիշների խոսքը, կարողանա հակիրճ և պարզ արտահայտել սեփական մտքերն ու տեսակետները,

գ. սահուն ու արտահայտիչ կարդա և պատմի,

դ. հասկանա տարբեր բարդության, համեմատաբար ծավալուն գրավոր տեքստեր,

ե. գրավոր շարադրի սեփական մտքերն ու կարդացած անծանոթ տեքստերը,

զ. գրի կարճ ռեֆերատներ,

է. կատարի հանձնարարված գրականության վերլուծություններ,

ը. զանազանի գեղարվեստական արժեք ներկայացնող գրականությունը ցածրորակ գործերից.